

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 11.12.18թ. կայացած թիվ 5.18-19 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 24-ը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Նիստը վարեց պրոֆեսոր Ռ. Ավագյանը:

Լսեցին՝ Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Պրոֆ. Ավագյանը հաշվետվություն ներկայացնելու համար խոսքը տվեց ֆակուլտետի
դեկան պրոֆ. Ռ. Հակոբյանին:

Ռ. Հակոբյանը իր **ելույթում** ասաց, աշխատանքները հիմնականում ընթացել են 4
հիմնական ուղղություններով.

1. Աշխատանքներ դպրոցականների և ուսանողների հետ:
2. Ուսումնական աշխատանքներ:
3. Գիտական աշխատանքներ:
4. Այլ հարցեր:

Դպրոցականների հետ կատարված աշխատանքները հետևյալն են.

1. Դպրոցներին կցված դասախոսներ և ուսանողներ
2. Բաց դասեր և պարբերական բաց դռների օրեր
3. Դպրոցականների այցելություններ ֆիզիկա լաբ - եր
4. 2018 – ԵՊՀ կազմակերպած դպրոցականների հանրապետական
օլիմպիադա:

Ուսանողների հետ կատարված աշխատանքներ.

1. Հանրամատչելի և գիտական սեմինարների շարք /22/:
2. Օլիմպիադա ցածր կուրսեցիների համար:

3. Այցելություններ՝ ատոմակայան, մոլեկուլային կենսաբա-նության ինստիտուտ, CANDLE, LT-Pirkal, Աշտարակի ինստիտուտներ, ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ:
4. SS բնագավառում ՀՀ նախագահի մրցանակներ: Բակալավր 1; մագիստրոս 1; ասպիրանտ 1:
5. Լավագույն մագիստրոսական թեզ – 2 մրցանակ:

Ուսումնական աշխատանքները.

1. Մեթոդական խորհրդի աշխատանքը (3 նոր մասնագիտ. մշակում) :
2. Ուսումնական լաբորատորիաների վերազինումը (չի ավարտվել):

Գիտական աշխատանքներ.

1. Ֆակուլտետի գիտական դրամաշնորհներ՝ 5 արտասահմանյան, 18 տեղական:
2. հրապարակումներ 2017-2018 ուս. տարում՝ 102 հատ:
3. Գիտական կոչումների շնորհում՝ 1 դոկտորական և 6 թեկնածուական:
4. 100 լավագույն գիտաշխատողներ - 9:

Այլ աշխատանքներ.

1. Ֆակուլտետի և ինստիտուտի համատեղ սեմինարներ:
2. Աշխատանքներ այլ բուհերի, ինստիտուտների, մասնավոր ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների հետ:
3. Արհմիության աշխատանքները:
4. Լաբորատորիայի անվանակոչություն:
5. Ֆակուլտետի ծերացման դեմ պայքարելու համար միջոցառումներ:

Ելույթի ավարտից հետո Վ. Հարությունյանի կողմից հնչեց հետևյալ **հարցը**.

Նշեցիք, որ նախատեսում եք բացել նոր մասնագիտություն "Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա" անվանմամբ: Արդյո՞ք հնարավոր է ֆիզիկայի ֆակուլտետի պայմաններում ունենալ կրթական ծրագիր, որը ըստ էության գաղտնի պետք է լինի:

Ռ. Հակոբյանի պատասխանը հետևյալն էր.

Ոսանողները որևէ գաղտնի ինֆորմացիայի չեն տիրապետելու: Մենք նախատեսում ենք պատրաստել մասնագետներ, ովքեր հետագայում աշխատելու են ռազմական տեխնոլոգիաների բնագավառում: Միննույն ժամանակ համարում եմ, որ ֆիզիկայի ֆակուլտետը միակ վայրն է, որտեղ հնարավոր կլինի կրթել ժամանակակից տեխնոլոգիաներին և միաժամանակ ռազմական գործին տիրապետող մասնագետներ:

Վ. Հարությունյանի երկրորդ **հարցը** հետևյալն էր.

Ֆակուլտետի լաբորատորիաները բավականին մաշված վիճակում են: Կա՞ն արդյոք միջոցներ, որոնք հնարավորություն կտան 1 կամ 2 տարին մեկ նոր սարքեր ձեռք բերել, ինչը անհրաժեշտ է ժամանակակից հետազոտությունների համար:

Ռ. Հակոբյանը **պատասխանեց**, որ ֆակուլտետը նման հնարավորություն առայժմ չունի: Բայց հնարավոր է դիմել որոշ դրամաշնորհների համար, որոնք որոշ չափով թույլ կտան լուծել խնդիրը: Ամեն դեպքում ամբիոններին հանձնարարվել է կազմել առաջին անհրաժեշտության սարքավորումների ցուցակ, որոնց ձեռք բերման համար միջոցներ հայթայթելու ուղղությամբ ֆակուլտետը փորձելու է քայլեր կատարել:

Ելույթ ունեցան Պրոֆ. Ռ. Ալավերդյանը, ով նշեց, որ շատ կողմ է նոր մասնագիտությունների ներդրմանը, հատկապես կարևորեց երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա մասնագիտության բացմանը: Պրոֆ. Ա. Վարդանյանը իր ելույթում ասաց, որ պակաս կարևոր չէ նանոֆիզիկա և նանոտեխնոլոգիաներ մասնագիտության բացումը, ինչը շատ արդիական է այսօր և մասնագետներ պատրաստելիս օգտագործելու է ամբողջ ֆակուլտետի ներուժը: Պրոֆ. Ա. Մուրադյանը նույնպես անդրադարձավ ֆակուլտետում նոր մասնագիտությունների ներդրմանը և նշեց որ նոր մասնագիտությունների ներդրումն է ֆակուլտետի զարգացման միակ ճանապարհը: Ասաց, որ թվարկված մասնագիտությունները իրար չեն ծածկում և պետք է աջակցել բոլորին էլ:

Ելույթ ունեցավ Ռ. Հակոբյանը, ով ասաց, որ ֆակուլտետը ունի հզոր կադրային բազա, բացի դրանից ունի շատ շրջանավարտներ, որոնք աշխատում են տարբեր բնագավառներում և պատրաստ են իրենց ներդրումն ունենալ ուսումնական պրոցեսում:

Պրոֆ. Ռ. Ավագյանը առաջարկեց քվեարկել՝ հավանության տալ դեկանի հաշվետվությունը:

Որոշեցին՝ հավանության տալ դեկանի տարեկան հաշվետվությանը:

Նիստի վերջում **Էլույթ ունեցավ** ԵՊՀ պրոռեկտոր, պրոֆ. Գ. Գևորգյանը: Նա նշեց, որ վերջին 8 տարիների ընթացքում շուրջ 150 000 000 դրամի ներդրում է արվել՝ ֆիզիկայի ֆակուլտետի լաբորատորիաների վերազինման և արդիականացման համար:

Հենային վարժարանի վերաբերյալ Գ. Գևորգյանն ասաց, որ դպրոց բացելու համար անհրաժեշտ են համապատասխան լիցենզիա և համապատասխան տարածք: Առայժ դրա հանարավորությունը ԵՊՀ-ն չունի:

Հրապարակումների թվաքանակի անկումը Գ. Գևորգյանը կապեց մասնագետների ծերացման հետ և նշեց, որ դա ԵՊՀ-ում ընդհանուր խնդիր է:


Նոր մասնագիտությունների ներդրման մասով պրոռեկտորը խորհուրդ տվեց ներգրավել նոր մասնագետների: Բացի դրանից առաջարկեց նոր ուսումնական ծրագրերը մշակել և ներդնել հերթով: Եվ վերանայել ուսման վարձերը:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝



Ռ.Ա. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան